ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- մարտի 2021 թվականի №--Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի №277Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՇԱՐՈՍՈԼԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՇԱՐՈՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի մարտի 11-ին հայտ է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով վեց ամիս ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2019 թվականի հուլիսի 31-ի №277Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրած «Շարոսոլար» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0646 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 76-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտով դիմում է Հանձնաժողով՝ նշելով հայցվող ժամկետը, մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է 4 աշխատանքային օր առաջ,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի մարտի 12-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 76-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի մարտի 12-ի գրությամբ, ըստ էության, ընդունել է թույլ տրված Կարգի խախտումը՝ մատնանշելով որոշակի պատճառներ,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 76-րդ կետի պահանջը՝ հայտը, սահմանված առնվազն 15 աշխատանքային օր առաջ ներկայացնելու փոխարեն, ներկայացնելով 4 աշխատանքային օր առաջ,

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ կետերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները և Կարգը՝ այդ թվում՝ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Վեց ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2019 թվականի հուլիսի 31-ի «ՇԱՐՈՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Շարոսոլար» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №277Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրած էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0646 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2021 թվականի մարտի 17-ը» բառերը փոխարինելով «մինչև 2021 թվականի սեպտեմբերի 17-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ ԼԷ №0646 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Շարոսոլար» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2019 թվականի հուլիսի 8-ի №1878/10/5 գրությամբ Հանձնաժողով ներկայացրած №19-0045 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 6 250 000 (վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2021 թվականի նոյեմբերի 1-ը գործողության ժամկետով:

3. Կարգի 76-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մարտի 17-ից, բացառությամբ որոշման 3-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- մարտի 2021թ.